ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԼՈՂ ԲՈՒՀԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ *

Արպատ Ավանեսյան
Գրիշա Հարությունյան

Բանալի բառեր՝ *ԼՈՂ բուհեր, գործիքամիջոցներ, կրթական ծրագրեր, եվրոպական կրթատարածք, ուսուցման գործընթաց, փաթեթ, դասընթաց, պլանավորում, կազմակերպում, վերջնարդյունք:*

Բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթության որակի ապահովումն ու ամրապնդումը առաջնային նպատակ են: Այս նպատակի իրագործման գործընթացում ընդգրկված են բոլոր կողմերը, և նրանք հավասարապես պատասխանատվություն են կրում բուհում որակի ապահովման համար: Բայց որքան էլ կողմերի միջև հավասար բաշխում լինի, այնուամենայնիվ, բուհի և նրա անձնակազմի վրա է ընկած պատասխանատվության զգալի մասը: ԼՈՂ բուհերում կրթական ծրագրերի որակի ապահովման և բարձրացման համար սահմանվել են կրթական ծրագրերի հիմնական խնդիրները, ռազմավարությունը ու մշակվել մի շարք գործիքամիջոցներ, որոնք գործում են նաև եվրոպական կրթահամակարգերում: Այժմ հանգամանորեն պարզենք, թե կրթական ծրագիրն իրենից ինչ է ներկայացնում: «Կրթական ծրագիր» հասկացությունը շատ հաճախ նույնացվում է դասընթացի հետ: Մինչդեռ կրթական ծրագիրը ուսուցման հետ կապ ունեցող բաղադրիչների փաթեթ է, որը հանգուցված է վերջնարդյունքին, իսկ դասընթացը կրթական ծրագրի մի մասն է և նպաստում է կրթական ծրագրով սահմանված կրթական վերջնարդյունքներին հասնելու գործընթացին: Կրթական ծրագիրն ու դասընթացը տարբերակելու համար նախ առանձին-առանձին խոսենք դրանց ձևավորման և իրականացման էտապների մասին: Դասընթացի կազմակերպումն այնքան էլ հեշտ խնդիր չէ: Այն իր մեջ ներառում է պլանավորման և իրականացման մի քանի փուլեր: Դրանք են [1]՝

- *Դասընթացի նպատակի սահմանումը*

Դասընթացի նպատակն սահմանելիս պետք է բացատրել, թե ինչ կտա այն ուսանողին և որքանով կլրացնի ընդհանուր կրթական ծրագիրը: Հստակ սահմանված նպատակով ուսանողը կարող է տեսնել դասընթացի և իր մասնագիտության միջև սերտ կապը:

- *Դասընթացի նկարագիրը*

Այս բաժնում պետք է ներկայացնել դասընթացի տևողությունը, քանի մոդուլից է այն բաղկացած, քանի սեմինար է նախատեսված, թեմաների բաշխումն ըստ շաբաթների և ուսանողներից պահանջվող կատարվելիք հանձնարարությունների ցանկը:

- *Դասընթացի բովանդակության ձևակերպումը*

Դասընթացը պետք է ունենա բովանդակային հստակ պլան և կառուցվածք:

- *Դասընթացի կրթական վերջնարդյունքների հստակ պլան և կառուցվածք:*
- *Դասընթացի կրթական վերջնաարդյունքների հստակ ներկայացումը*

---

* Հոդվածն ընդունվել է 16.10.19:
Հոդվածը տպագրության է երաշխավորել Շուշիի տեխնոլոգիական համալսարանի «Հումանիտար առարկաների» ամբիոնի վարիչ Մ. Հարությունյանը: 08.11.19:

Դասընթացի կարևորագույն ասպեկտներից մեկը կրթական վերջնարդյունքների հստակ ներկայացումն է: Ուսանողը պետք է պարզ տեսնի այն կրթական վերջնարդյունքները, որոնք պետք է հնարավորինս պարզ և չափելի ձևակերպված լինեն:

- Դասընթացի գրականության ցանկը

Դասընթացի համար կարևոր նախապայման է համարվում դասընթացի ընթացքում օգտագործվող գրականության ցանկի և ինֆորմացիայի այլ աղբյուրների տրամադրումը, որը հեշտացնում է անհրաժեշտ ինֆորմացիայի հայթայթումը: Դասընթացի օրացույցը առկա բաղադրիչների ժամանակացույց է, որը համաձայնեցված է բուհում ուսումնական գործընթացների կազմակերպման կարգին: Օրացույցի առկայությունը կարևոր է, որովհետև ուսանողները միշտ ցանկանում են իմանալ, թե դասընթացի որ փուլում ինչով պետք է զբաղված լինեն:Դասընթացի ստուգման և գնահատման եղանակները[2]

Այս բաժնում դիտարկենք նաև ԼՂՀ բուհերում ուսանողի ստուգման ու գնահատման բոլոր մեթոդներն ու գործիքները: Գնահատման գործիքները պետք է ընտրվեն այնպես, որ հասկանալի լինեն յուրաքանչյուր ուսանողի համար: Ուսանողը պետք է իմանա, թե ինչ բաղադրիչներով է գնահատվում իր աշխատանքը: Ստուգման և գնահատման եղանակները սահմանելիս, սակայն, դասավանդողը չի կարող միայն որոշում կայացնել, նա պետք է այդ ամենը համաձայնեցնի բուհում գործող գիտելիքների գնահատման կարգին, որն իր հերթին պետք է բավարար հնարավորություններ ընձեռի դասախոսներին՝ դասընթացի կրթական վերջնաարդյունքներին համապատասխան պլանավորելու և իրականացնելու դասավանդման և գնահատման իր ռազմավարությունը: Հասարակության այն ոլորտները, որոնք մասնագիտացած չեն կրթության բնագավառում շատ հաճախ դասընթացն ու կրթական ծրագիրը համարում են հոմանիշներ: Այդ շփոթմունքը, հավանաբար, առաջացել է այն պատճառով, որ կրթական ծրագրերի ձևավորման և իրականացման փուլերից շատերը առկա են նաև դասընթացների ձևավորման ժամանակ, ինչպես նաև պայմանավորված է «մասնագիտություն», «կրթական ծրագիր» տերմինների վերափոխմամբ:

Իրականում ԼՂՀ բուհերում կրթական ծրագրերի նպատակն է՝ սովորողի կարողությունների և հմտությունների ձևավորումը, գիտելիքի ծավալի ընդլայնումը և որակի բարձրացումը:Կրթական ծրագրերի որակի ապահովման գործընթացում հիմնական դեր է խաղում կրթական ծրագրի նպատակների կարևորությունը: Կրթական ծրագրի մասնակիցը պետք է տեսնի գնահատման եղանակներին ուղղակի կապակցված վերջնարդյունքները:

Յուրաքանչյուր կրթական ծրագիր պետք է[3]՝

- Համապատասխանի հասարակության պահանջմունքներին,
- Ապահովի շրջանավարտների զբաղվունակությունը,
- Ուղղված լինի ուսանողների՝ որպես քաղաքացիական հասարակության անդամների դաստիարակությանը,
- Ընդունվի գիտակրթական հանրության կողմից,
- Բավարար թափանցիկություն ապահովի (ինչը հնարավորություն կընձեռնի մյուս համալսարանների միջև վստահության մթնոլորտ ստեղծելու):

Ծրագրի (որակավորման) պրոֆիլը պետք է համապատասխանի հասարակության պահանջնմունքներին և ապահովի շրջանավարտների զբաղվածությունը աշխատաշուկայում: Ուսանողները, ակադեմիական հանրությունը, գործատուները, մասնագիտական ընկերակցությունները, հասարակական կազմակերպություններն ու շրջանավարտներն իրականում հասարակության պահանջմունքներն արտահայտողներն են:

Կրթական ծրագրի պրոֆիլը սահմանում է ծրագրի խնդիրներն ու նպատակները:

Ծրագրի պրոֆիլին են հանգուցվում նաև ուսումնական պլանի կառուցվածքն ու բովանդակությունը, դասավանդման, ուսումնառության և գնահատման բոլոր մեթոդները:

Կրթական ծրագիրը նաև սահմանում է ուսումնական գործընթացի կազմակերպումը, ծրագրի բովանդակությունը յուրացնելու համար ուսանողին անհրաժեշտ ժամաքանակի սահմանումը: Կրթական ծրագիրը մի շարք փաստաթղթերից բաղկացած փաթեթ է, որն իր մեջ ներառում է[4]՝

- *Աշխատանքային ուսումնական ծրագիրը (ուսումնական պլանը),*
- *Դասընթացների և այլ ուսումնական մոդուլների ծրագրերը,*
- *Միջանկյալ և եզրափակիչ գնահատման/ատեստավորման ձևերը,*
- *Ծրագրի ընթացիկ մոնիտորինգի և պարբերական գնահատման ու վերանայման ընթացակարգերը:*

Այստեղ անդրադառնանք նաև ԼՂՀ բուհերի կրթական ծրագրերի փոփոխություններին և ժամանակակից նոր պահանջներին՝ Բոլոնիայի բարեփոխումների համատեքստում.

- *Կրթական ծրագրերի պլանավորման, մշակման և իրականացման փուլերում «Թյունինգ» մեթոդաբանություն ներմուծման կարևորությունը.*
- *Ծրագրերի մոդուլացում, էլեկտիվ (ընտրության հնարավորությամբ) դասընթացների հաշվեկշիռ հաստատում (Պրահա, 2001).*
- *Կրթական ծրագրերում շարժունության հնարավորությունների ընդլայնում (Լյովեն, 2009).*
- *Դոկտորական ծրագրերի ներմուծում 3-4 տարի տևողությամբ (Բերգեն, 2005)[5].*
- *Կրթական ծրագրերի կառուցվածքային փոփոխություններից անցում բովանդակային կողմի ապահովման: Դասախոսակենտրոն մոտեցումից՝ ուսանողակենտրոն մոտեցում.*
- *Կրթական ծրագրերի և որակավորումների հաստատման, պարբերական մշտադիտարկման և վերանայման պաշտոնական ընթացակարգերի առկայություն.*
- *Կրթական ծրագրերի պլանավորման փուլում հանրային կարիքի բացահայտման և արտաքին շահեկիցների հետ խորհրդակցության անհրաժեշտություն.*
- *Արդի աշխատաշուկայի պահանջմունքներին համապատասխան կրթական ծրագրերի պլանավորում.*
- *Կրթական ծրագրերի մշակման, արդիականացման և փորձաքննության գործընթացներում աշխատաշուկայի հետ հետադարձ կապի հաստատում:*

Այժմ դիտարկենք կրթական ծրագրի՝ կառուցվածքը, բովանդակությունը,կրեդիտներով արտահայտված բեռնվածության որոշումը և նախագծման մոտեցումները:

Կրթական ծրագրի պլանավորման և կառուցման կարևորագույն մաս է կազմում կրթական ծրագրի բովանդակությունը: Կրթական ծրագիրը բովանդակային առումով կարող է բաժանվել երեք հիմնական կառուցամասերի՝ ընդհանուր կրթություն, հիմնական կրթություն և լրացուցիչ կրթություն[6]:

1. Ընդհանուր կրթությունն իր հերթին բաժանվում է երեք բաղադրիչների.

Հիմնարար՝ բաղկացած է այնպիսի դասընթացներից առանց որոնց հիմնական կրթության իրականացումն անհնար է:

Հումանիտար՝ սոցիալ-տնտեսական շրջանավարտի հումանիտար, մշակութային,սոցիալ-անձնային և հաղորդակցման կարողությունների ձևավորումն է:

2. Հիմնական կրթությունը բաղկացած է երկու բաղադրիչից՝ հիմնական մասնագիտական և ընդհանրական կամ փոխանցելի:

Հիմնական մասնագիտական՝ շրջանավարտի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական ուղղվածության կոմպետենցիաների ձևավորումն է, բաղկացած կրթական ծրագրի միջուկը կազմող դասընթացներից:

Ընդհանրական կամ փոխանցելի՝ գիտելիքների փոխանցումն է հարակից մասնագիտական ոլորտներ:

3. Լրացուցիչ կրթության կառուցամասն իր մեջ ներառում է ոչ պարտադիր ֆակուլտատիվ կամ կոլտնտեսական կամ ընտրական դասընթացներ: Կրթական ծրագրի նախագծման առաջին փուլում ծրագրի կառուցվածքի և բովանդակության մշակման համար կարող է ընտրվել ուսումնական դասընթացների խմբավորման ցանկացած տարբերակ, որն ապահովում է դրանց ամբողջական ցանկը[7]:

Կրթական ծրագրի դասընթացների և ուսուցման գործնական ձևերի ցանկը կազմելուց հետո հարկավոր է որոշել, թե դրանցից որոնց շրջանակներում են ձեռք բերվելու ծրագրի ավարտին ակնկալվող կրթական վերջնարդյունքներով նախատեսված կոմպետենցիաները: Այսինքն՝ հարկավոր է գնահատել կրթական ծրագրի բովանդակության նպատակաուղղվածությունը, որը ենթադրում է դասընթացների և ուսուցման գործնական ձևերի համադրում ծրագրերի նպատակների՝ ակնկալվող կրթական վերջնարդյունքների հետ: Դա պահանջում է դասընթացներից յուրաքանչյուրի՝ դրված նպատակներին հասնելու կարողության գնահատում:

Գնահատման արդյունքում կպարզվեն՝

- ծրագրում համապատասխան դասընթացներով և ուսումնական մոդուլներով չապահովված կոմպետենցիաները, որոնք ուսանողների կողմից չեն կարող ձեռք բերվել առանց ծրագրի բովանդակության փոփոխության,
- կբացահայտվեն այն դասընթացները և ուսումնական մոդուլները, որոնք չեն նպաստում դրված նպատակների իրականացմանը կամ դրանց հասնելու համար բավարար հնարավորություններ չունեն[8]:

Այժմ դիտարկենք նաև ԼՂՀ բուհերում մասնագիտական կրթական ծրագրի նպատակներն ու խնդիրները:

«Մասնագիտության կրթական ծրագիր» փաստաթղթի առաջին չափորոշիչն առնչվում է մասնագիտության կրթական ծրագրի մշակմանն ու հաստատմանը: Այդ չափորոշչի չափանիշի համաձայն՝ մասնագիտության կրթական ծրագիրը (ՄԿԾ) պետք է համապատասխանի ՀՀ և ԼՂՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի, պետական կրթական չափորոշչի և որակավորման բնութագրի պահանջներին: Այն պետք է նաև համապատասխանի բուհի կողմից սահմանված առաքելությանը[9]:

Ըստ առաջին չափորոշչի առաջին կետի՝ մասնագիտության կրթական ծրագրի նպատակներն ու խնդիրները ուսումնական հաստատության առաքելության և նպատակների հետ պետք է համահունչ լինեն հարստության առաքելությանը, համապատասխանեն պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված լինեն՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների[9]:

ԼՂՀ բուհերում պահպանվող «Մասնագիտության կրթական ծրագիր» փաստաթղթի չափորոշչի համար պահանջվող փաստաթղթերն են՝

- Կրթական ծրագրի ռազմավարական ծրագիրը և կամ հաստատության ռազմավարական ծրագիրը:

Ռազմավարական ծրագրի առկայությունը պարտադիր է, որովհետև դրա սահմանումն ու կազմումը կրթական ծրագրերի ձևավորման առաջնային փուլերից են՝

- Կրթական ծրագրի հստակ սահմանված հայեցակարգը և շրջանավարտ մասնագետի նկարագիրը,
- Ուսանողի ուղեցույցը:

Ուսանողի ուղեցույցի նպատակն է ծանոթացնել ուսանողին ուսումնական հաստատության պատմությանը, կառուցվածքին, գիտամանկավարժական գործընթացի կազմակերպմանը, ներհամալսարանական որոշ կառույցներին, դրանց գործունեությանը, դասապրոցեսների մեթոդական կողմերին և այլն: Ուսանողի ուղեցույցը չպետք է ընկալվի որպես դասընթացի ուղեցույց:

Առարկայական ծրագրի օրինակ

Առարկայական ծրագրերը ներառում են՝ խնդիրներն ու նպատակը: Առարկայական նկարագրում պետք է հստակ ձևակերպված լինեն մուտքային պայմանները և ակնկալվող արդյունքները: Այն պետք է միտված լինի կոնկրետ մասնագիտական որակների ձևավորմանը:

- *Կրթական ծրագրի մշակման և հաստատման ընթացակարգ (եր) ը <<Ենթակառուցվածքային հավատարմագրման չափանիշները և պահանջվող հիմքերը>> փաստաթղթի երրորդ չափորոշչի առաջին կետով մասնագիտության կրթական ծրագրերի համար պահանջվող հիմքեր են՝*
- *Մասնագիտության կրթական ծրագրի նկարագիրը,*
- *Մասնագիտության կրթական ծրագրի ուսումնառության ակնկալվող արդյունքները,*
- *Ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդները,*
- *Մասնագիտական կրթական ծրագրի համար առաջավոր փորձի համեմատական վերլուծության իրականացման քաղաքականությունը և ընթացակարգերը,*
- *Մասնագիտության կրթական ծրագրի համադրելիությունը որակավորումների ազգային շրջանակի հետ,*
- *Մասնագիտության կրթական ծրագրի ընդհանուր և մասնագիտական կոմպետենցիաների ցանկը:*

Երկու փաստաթղթերում էլ զարմանալիորեն հանդիպում ենք «մասնագիտության» կրթական ծրագիր տերմինին: Սա իր հերթին շփոթմունք է առաջացնում, որովհետև «մասնագիտություն» տերմինը ժամանակին վերափոխվել է «կրթական վերջնարդյունքներ» տերմինի: Զարմանալի է, նաև այն փաստը, որ երկու փաստաթղթերի միևնույն չափորոշչի համար պահանջվող փաստաթղթերն ու հիմքերը ոչ լիովին են համընկնում:

Փաստաթղթերի վերլուծության հետ փորձենք զուգահեռ անցկացնել առկա չափորոշիչների և Արցախի պետական համալսարանի միջև: Այս չափորոշչի կիրառելիությունը հաստատող հիմքեր և փաստաթղթեր փնտրելիս բուհի կայքում հանդիպեցինք հետևյալին՝ համալսարանն իր ռազմավարական ծրագրում սահմանված առաքելությամբ մասնավորապես ձգտում է լինելու համաշխարհային և ազգային կրթական համակարգի մաս կազմող, գիտելիքահենք հասարակության, աշխատուժի շուկայի հարափոփոխ պահանջներին բավարարող անհատի մտավոր, քաղաքացիական ու բարոյական որակների ձևավորմանը նպաստող բուհ, կրթության նորագույն ուղղությունների և հետազոտական մեթոդների արմատավորման ու տարածման օջախ, պատրաստել խորը գիտելիքներով օժտված և գործնական հմտություններ ունեցող բարձրորակ կադրեր:Բացի այդ ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից լիցենզավորվել են պետական և պետհավատարմագրված բակալավրական և մագիստրոսական բոլոր ծրագրերը[9]:

Այսպիսով՝ Հայաստանում և Արցախում կրթական նոր համակարգին անցումը և հիմնական կառուցվածքային ծրագրային բարեփոխումներն ընթացան այն շրջանում, երբ անկախացմանը զուգահեռ՝ Հայաստանը և Արցախը, ինչպես նշվեց, հայտնվեցին սոցիալ-տնտեսական աղետալի վիճակում (1991-1995թթ), որը բնականաբար ամենևին էլ նպաստավոր չէր հանրապետության կրթական կյանքի բարեփոխման առումով:

Պետական կրթական քաղաքականության և բարձրագույն կրթական համակարգի զարգացման ծրագրերի բացակայությունը երկար ժամանակ թույլ չէր տալիս սկսել համակարգի իրական բարեփոխումները, իսկ դրա առանձին փուլերի համար ընդունվող նորմատիվներն ու կանոնակարգերը որոշ խնդիրների ժամանակավորապես լուծում էին տալիս, սակայն ողջ համակարգի տեսանկյունից բերում էին հիմնախնդիրների խորացման:

Հիմնախնդրի վերաբերյալ գիտական գրականության վերլուծությունը ցույց տվեց, որ 1990-ականների սկզբին անկախացած Հայաստանում և Արցախում հասունացել էր մասնագիտական կրթության[10] մի այնպիսի ճկուն համակարգի ներդրման անհրաժեշտություն, որը մի կողմից՝ պետք է բավարարեր Հանրապետության նոր կադրային կարիքները՝ ձևավորելու շուկայական տնտեսության պայմաններում, մյուս կողմից՝ համապատասխաներ ժամանակակից միջազգային չափանիշներին: Անկախ պետականություն կերտող Հայաստանի և Արցախի տնտեսական, քաղաքական մշակութային հանրակրթության, արտադրության ոլորտը պետք է գինվի լայն ընդգրկմամբ տեխնիկական, տնտեսագիտական, իրավաբանական, մանկավարժական և հումանիտար ամուր բազա ունեցող մասնագետներով՝ ունակ դիմակայելու ժամանակակից շուկայական տնտեսության և հանրակրթության մրցակցային պահանջներին:

Հայաստանի և Արցախի բարձրագույն կրթության բարեփոխումների համար հիմք են հանդիսացել՝

1. Իրավիճակային փոփոխությունները և նոր խնդիրների առաջադրումը՝

ա) զարգացումները Հայաստանում և Արցախում՝

- *սոցիալական-տնտեսական փոփոխություններ,*
- *ֆինանսավորման նոր քաղաքականություն,*
- *բուհերի կազմակերպման ձևի փոփոխություններ,*
- *ոչ պետական բուհական համակարգի ձևավորում*

բ) ձևավորված հիմնախնդիրները՝

- *օրենսդրական հիմքերի ձևավորում,*
- *ֆինանսական հոսքերի ապահովում և արդյունավետ տնօրինում,*
- *հասարակության, այդ թվում՝ աշխատաշուկայի հետ նոր հարաբերությունների ձևավորում,*
- *կրթության համակարգի և առանձին վերցրած բուհերի մրցունակության ապահովում*

գ) ինտեգրման անհրաժեշտությունը՝

- *անկախությամբ տրված հնարավորությունը՝ որպես հարաբերությունների սուբյեկտ,*
- *պետության անդամակցությունը միջազգային կառույցներին,*
- *միջազգային փաստաթղթերի վավերացումը («Եվրոպական մշակութային կոնվենցիայի», 1997թ. «Լիսաբոնի կոնվենցիա», ստորագրվել է 2000թ.,վավերացվել է 2004թ., «Բոլոնիայի գործընթացի հայտը և Ազգային զեկույցը»՝ 2004թ.),*
- *ինտեգրման սկզբունքների օրենսդրական հիմքերի ձևավորումը՝ «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին օրենք», 2004թ.՝ Հայաստանում, Արցախում՝ 2005թ.:*

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այս առումով Հայաստանի և Արցախի բուհերում ձեռնարկվել և իրականացվում է միջոցառումների համալիր ծրագիր, որը միտված է նպաստելու համաշխարհային ընկերակցության մեջ անկախ Հայաստանի ինտեգրմանը: Վերջինի առաջադրած պահանջներից է կրթական միջազգային չափանիշների ընդունումն ու յուրացումը: Այս ճանապարհին կարևորագույնը, թերևս, ուսուցման կազմակերպումն է եռաստիճան կրթական համակարգով (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա), որին Հայաստանի բուհերի մի մասը (ԵՊՀ, ԵՊՃՀ) անցել է 1995-1996 ուսումնական տարվանից:

Այսպիսով, ԼՂՀ բուհերի վերափոխման առաջին փուլում առաջին անգամ արմատավորվեց ուսուցման բազմաստիճան կառուցվածք, որով, փաստորեն, ամբողջանում է անընդհատ տարբեր մասնագիտությունների կրթության ցիկլը: Տարբեր կրթական ծրագրերով բուհն ավարտած շրջանավարտներին շնորհվում են կրտսեր մասնագետ (երկամյա ուսուցում), ըստ մասնագիտության՝ բակալավրի (օր՝.մանկավարժության մագիստրոսի, երկամյա ուսուցում և մանկավարժ-հետազոտողի (երկամյա ուսուցում) որակավորման աստիճաններ:

Գրականության վերլուծությունը հնարավորություն է տալիս հիմնավորելու , որ սկզբում երկամյա կրթության, իսկ 1999-2000 ուստարվանից՝ որոշ բուհերում շրջանավարտության արդյունքում քոլեջի սաների առավել առաջադիմող մասը, սահմանված կարգով, իրավունք ուներ կրթությունը շարունակելու բակալավրի աստիճանում, մագիստրոսի և հետազոտողի աստիճաններում ուսուցումը կատարվում էր ասպիրանտական դպրոցի շրջանակներում, որը հիմնադրվեց բուհերի գիտական խորհուրդների, 1992թ. մայիսի 27-ի որոշմամբ[14] համաձայն բուհերի գլխավոր պլանի:

Որակավորման բազմաստիճան համակարգը կոչված է խթանելու ուսանողի կրթական առաջընթացը, ստեղծելու ուսանողների միջև մրցակցային դաշտ և հնարավորություն ընձեռելու առավել առաջադիմողներին՝ շարունակական կրթությամբ բարձրանալ ավելի ու ավելի վեր: Կրթական այս չորս ծրագրերին զուգահեռ Հայաստանի և Արցախի բուհերում գործում է նաև մեկ այլ դիպլոմավորված մասնագետի ծրագիրը (հնգամյա ուսուցմամբ): Այսպիսով, նշված բուհերում իրականացվում են միջին, բարձրագույն, և հետբուհական մասնագիտական կրթության հինգ հիմնական ծրագրեր: Սրանցից զատ, բուհերում գործում են լրացուցիչ կրթության ծրագրեր՝ համապատասխան բաժանմունքների և դասընթացների ցանցի միջոցով, որոնք կոչված են բավարարելու ուսանողների ու շրջանավարտների կրթական պահանջները:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Ինչպես պատրաստել և իրականացնել ուսանողամետ դասընթաց» Մեթոդական ուղենիշներ դասախոսների համար /Ս.Բ Կարաբեկյան, Հ.Մ. Քոչարյան, Երևան, 2011, էջ 8-10:
2. «Ինչպես պատրաստել և իրականացնել ուսանողամետ դասընթաց» Մեթոդական ուղենիշներ դասախոսների համար /Ս.Բ.Կարապետյան, Հ.Մ. Քոչարյան, Երևան, 2011 էջ 20-21:
3. Բուդաղյան Ա.Ս., Կարաբեկյան Ս. Բ. «Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում», Երևան, «Թասկ» ՍՊԸ, 2010, էջ 12:
4. Սարգսյան Յու. Լ., Բուդաղյան Ա.Ս. Բոլոնիայի գործընթացը Հայաստանում. Ուղեցույց, Երևան, Անտարես, 2008 էջ 8-10:
5. Սարգսյան Յու. Լ., Բուդաղյան Ա. Ս. Բոլոնիայի գործընթացը Հայաստանում. Ուղեցույց, Երևան, Անտարես, 2008, էջ 11:

6. Բուդաղյան Ա. Ս., Կարաբեկյան Ս.Բ. «Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում», Երևան, «Թասկ» ՍՊԸ, 2010, էջ 10:
7. Բուդաղյան Ա.Ս., Կարաբեկյան Ս.Բ. «Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում», Երևան, «Թասկ» ՍՊԸ, 2010 էջ 8:
8. «Մասնագիտության կրթական ծրագիր» չափորոշիչ առաջին Ակնկալվող ուսումնառության արդյունքներ տերմինի փոխարեն ներմուծվել է կրթական վերջնաարդյունք տերմինը (learning outcome):
9. Որակ 2015, ԵՊԼՀ որակի ապահովման կենտրոնի ռազմավարական ծրագիրն ու գործողությունների պլանը էջ 10-12:
10. Տե՛ս Հ. Պետրոսյան, «Մասնագիտական կրթության որակի ապահովման գործընթացի կառավարման մանկավարժական տեխնոլոգիաները», «Ան-Զոն» հր.,Երևան, 2010, էջ 13-14:
11. Տե՛ս Ա.Սարգսյան, ԵրՊՀ-ը /ՀՊՃՀ/ 1993-2003, «Ճարտարապետ»հր., Երևան, 2003, էջ 93:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

ԼՂՀ բուհերի կրթական ծրագրերի որակի ապահովման հիմնախնդիրները

Արպատ Ավանեսյան
Գրիշա Հարությունյան

ԼՂՀ բուհերում կրթական ծրագրերի որակի ապահովման և բարձրացման համար սահմանվել են կրթական ծրագրերի հիմնական խնդիրները, մշակվել են ռազմավարություններ և մի շարք գործիքամիջոցներ, որոնք գործում են նաև եվրոպական կրթատարածքում:

Կրթական ծրագիրը ուսուցման գործընթացը ապահովող բաղադրիչների փաթեթ է՝ ուղղված ակնկալվող վերջնարդյունքին: Կրթական ծրագրի կարևոր բաղադրիչը հանդիսանում է դասընթացը: Դասընթացի ճիշտ ընտրությունը, պլանավորման և իրականացման ճիշտ կազմակերպումը կարևոր դերակատարություն ունեն անհրաժեշտ վերջնարդյունքի հասնելու համար:

РЕЗЮМЕ

Задачи обеспечения качества образовательных программ в вузах НКР

Арпат Аванесян, Григорий Арутюнян

Ключевые слова: вузы НКР, механизмы, образовательные программы, Европейское образовательное пространство, процесс обучения, пакет, учебный курс, планирование, организация, итоговый результат.

С целью обеспечения и повышения качества обучения в вузах НКР были определены основные задачи образовательных программ, разработаны стратегии и ряд механизмов, применяемых также в европейском образовательном пространстве.

Образовательная программа – пакет компонентов, обеспечивающих процесс обучения и нацеленных на получение планируемого итогового результата. Важным компонентом образовательной программы является учебный курс. Правильный выбор, планирование и проведение курса имеют важное значение для достижения необходимого результата.

SUMMARY

Key Issues of Securing Educational Program Quality of the NKR Higher Education Institutions

Arpat Avanesyan, Grigori Harutyunyan

Keywords: NKR universities, mechanism, educational programs, European educational area, learning process, set, course, planning, organization, outcome.

For ensuring and improving the quality of educational programs in the NKR universities, key problems of those programs have been defined, strategies and a number of tools have been developed that are being operated in the European educational area as well.

Educational program is a set of components that leads the learning process towards the expected outcome. An important part of the learning program is the course. The right choice of course, the accurate organization of planning and implementation play an important role in achieving the necessary outcome.